ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— օգոստոսի 2023 թվականի №—Ա

«ՀԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՀԱ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հուլիսի 12-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն Ընկերության մասնակից Արամ Հայկի Եղոյանը նախատեսում է իրեն պատկանող՝ Ընկերության 50 տոկոս բաժնեմասը վաճառել Արմեն Պավելի Աղաբաբյանին,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 17-ի №ԳԲ/34.2-Մ2-8/2421-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը 2023 թվականի օգոստոսի 15-ի №01/11.1/7719-2023 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում Հայտի վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը, որի համաձայն՝ վերջինս հայտնել է, որ Հայտի առնչությամբ ազգային անվտանգության կամ պետական շահի տեսանկյունից առաջարկություններ և դիտողություններ չունի,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի

2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Արամ Հայկի Եղոյանին պատկանող՝ Ընկերության 50 տոկոս բաժնեմասը Արմեն Պավելի Աղաբաբյանին վաճառելու գործարքին:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված՝
   1) գործարքը կարող է կնքվել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.
   2) գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2023 թ.